



մէջ հեղինակը չէր կարող տալ մեզ Պետրոս Գուրեանի ամբողջացրած պատկերը. այդ պակասութիւնն ինքն կենսագրողը եւ խոստովանում է. խոստովանում է և այն, որ բանաստեղծի պատկերը գծագրելիս նա երբեք իրողութիւնները չի տարբերէր իր անձնական ենթադրութիւններէր: Բայց և այնպէս, Արշակ Չօպանեանի աշխատութիւնը միանգամ ընդ միշտ կենդանութիւն է տալիս մոռացված կենսերին և ամբողջ կերպով լուսաբանում է այդ կենսերը և նրա բուն ստեղծագործը:

Շնորհիւ այդ կենսա գրութեան մենք ծանօթանում ենք շնորհալի բանաստեղծի կենսի գլխաւոր բաղկանքի հետ:

Պետրոս Գուրեան ծնվել է 1851 թ. մայիսի 20-ին. նա մի աղքատ ընտանիքի զաւակ էր և նրա մանկութիւնը անցել է անշուք, միօրինակ: Շատ վաղ հասակից նա ցոյց է տուել իր ձիրքը. եղել է աշխատասէր, կրօնասէր, յաճախելով միշտ եկեղեցին և խիստ աշխոյժ: Տասն երեք տարեկան հասակում նա գրել է իր առաջին ոտանաւորը. այդ ոտանաւորը նշանաւոր է նրանով, որ պարզ աշխարհաբար լեզուով է գրված, մի բան, որ այն ժամանակ համարվում էր mauvais ton և ընդունելի չէր. բայց նշանաւոր է նա մանաւանդ նրանով, որ 13 տարեկան մանուկը ցոյց է տալիս նրա մէջ մի ըմբոստ, յանդուգն, բողոքող ոգի:

Ուսումը կիսակատար թողնելով, Գուրեանի ծնողները նրան հանում են դպրոցից 1867-ին և այդ օրից մինչև իր մահվան ժամը՝ 1872 թ. յունվարի 20-ը, բանաստեղծական աւելում չի պատանին ստիպված է լինում մի ահագին, դառն, ծանր և յուսահատ կռիւ մղել, կռիւ կոպիտ, կոշտ կենսի և դաղաբերութիւն: Այդ կռիւն էլ ինքնուրուի է նրան գերեզման: Բայց այդ կռիւն մէջ էլ անում, գործանում է նրա բանաստեղծական տաղանդը, որ տալիս է այնքան արտադրութիւններ, որոնց հիման վրա այսօր կարելի է նրան դասել բուն բանաստեղծների, եթէ ոչ առաջնակարգ, զի՛ք երկրորդական բանաստեղծների կարգում, իբրև լիրիկ կամ քնարեգու բանաստեղծ և այդ ասպարեզում գուցէ միակը հայերի մէջ:

Գուրեանի բանաստեղծութեան ուսումնասիրութիւնը պ. Չօպանեան կատարել է բարեխղճաբար և անկողմնապահ ոգով: Նա հանդիսանում է մի անաչառ կրիտիկոս, որի յարգանքը դէպի բանաստեղծը հենց արտայայտվում է այդ անաչառութեամբ:

Քննադատութեան լեզուն թէև սահուն, գոյգոր, բայց տեղ տեղ ծանր է, մի յատկութիւն, որ սովորական է Կ. Պոլսի նոյն իսկ ամենալաւ հայ գրագէտներին:

Օր պէտք եղաւ այդ բոլորին ճանապարհ դնելու: Երեկոյեան դէմ հասա՛ք Տանտախ կայարանը և հազիւ վաղօթից դուրս եկա՛ք. որ յանկարծ հրացանի թնդիւններ և վայրենի ձայներ դղրդեցին պատֆօրման: Մօտ հարիւր արաբ ֆէլլահներ, չալմաները փաթափած, ցնցոտիներ հագած, այսինքն մի պատառոտած սպիտակ, կեղտոտ շապիկներով հագուածի տեղ, ոտաւորով, մի մի հնազարեան հրացաններ բռնած, սկսեցին աղաղակել, դուռը: Դրանք—Պօղոս բէյ Ալըզհանի գիւղացիներն էին, որոնք եկել էին զինաւորելու հրաւիրակ եպիսկոպոսներին: Նրանց գլխաւորը, մի առայգ և հովեկա արաբ, նիզակը ձեռքին, նփռիւք վրա նստած, ինչ որ հրամաններ տուց և հաւ մի քանի էջեր, ճիւղ համեստներով ներկայացրին մեզ շինելով էջերի վրա, որոնք բաւական արժեքից են, սկսեցինք առաջ գնալ. մեր առաջից խառնի-խառն վազում էին ֆէլլահները, հրացաններ և ջահեր ձեռքներին բռնած և երբեմն երբեմն վայրենի աղաղակներ արձակելով: Նրանք իրանց լեզուով և ձեռով օվացիաներ էին անում իրանց տիրող հիւրերին: Գիշերվայ մթութեան մէջ, որ յանկարծ արեց, այդ բոլորն սկսեց իրանց նիզակներով, հրացաններով և սպիտակ շապիկներով ճիւղադնելի աղեղնով ինչ էն գործում և կարծես գերեզմանից նոր յարութիւն առած մարդիկ էին:

Մենք գնում էինք աւազոտ դաշտերի և բամբակի պլանտացիաների միջև: Տեղ տեղ երևում էին արաբական աղքատիկ գիւղեր: Ֆէլլահները և ֆէլլահները, իրանց օրվերից դուրս եկած, ակնապիշ և դաղանի նման նայում էին մեզ վրա: Այդ արաբական գիւղերը շատ անուր կերպարանք ունեն: Ֆէլլահների քնակարանները շինված

խորհուրդ ենք տալիս մեր ընթերցողներին կարդալ այդ գիրքը:

Ա.

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԹԳՏԻՆ

Ստաղանք թիւքաց Հայաստանի, Երևանի ու Կարսի նահանգների սովետների օգտին.

1) Ե կ ա տ եր ի ն օ դ ա ր ի ց, Գէորգ քահանայ Զաքարեանցի միջոցով 4 բուրլի, որ հաւաքված է Կուրանեան նահանգի Նովոմիրասովկա գիւղի հայերից:

2) Բ ա գ ու ի ց, Մկրտիչ Մանուկարեանի միջոցով 15 բ. 50 կօպէկ, որ նուիրել են՝ Մանթաշեանի գործարանի ծառայողները—8 բ. 50 կօպ. Աղամեան և Թումանեան գործարանի ծառայողները—6 բ. և ինժ. Միրզոեան—1 բուրլի:

3) Թ ի Ֆ ի խ ի ց, հեռագրական ծառայողներից, նրանց նուիրատու թեան նոր ամսականը՝ 15 բ.: Ուրեմն նախկին 670 բուրլի 29 կօպէկի հետ այժմ ունենք ընդամենը 704 բուրլի 79 կօպէկ: Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 9223 բ. 61 կ.: Ուղարկել ենք 8519 բուրլի:

ՆԱՄԱԿ ԵՋՄԻՍՏՆԻՑ

Սեպտեմբերի 26-ին

Սեպտեմբերի 24-ին Էջմիածնում բաւական շարժում կար: Գէորգ զորավարի տօնն էր. ձեռնարանն այդ օրը տօնում է իր վեհապետ հիւնարի յիշատակը: Մօզմուխտի ուխտաւորները, որոնք առանց Էջմիածնի այցելութիւն տալու չեն վերադառնում իրանց տեղերը, արդէն սկսել էին երեսը առաւօտից և, ժամ առ ժամ, երթալով ստորաբանում էին:

Տարադնիւրի և բարբառների մի խառնուրդ: Աչքի է ընկնում շիրակեցի ուխտաւորը, մանաւանդ քաղաքայինը, իր հաճելի տարազով. մահաւոր ալ գոգնոցը՝ ոսկեքանուածը եղբներով, գլխակապը՝ շար ոսկի ճակատնոցով, ուր յեղված է մարդաբար, բայց մանաւանդ սիրուն դէմքը՝ խոշոր ու փայլուն աչքերով թուխ արտեւանների չրջանակի մէջ, նրբագիծ յոնքերի կամարների տակ, զբաւում են խոյն ուշք ու միտք:

Չնայ ասում թէ դրանք բոլորն էլ գեղեցիկ են, խոնաւ քնակարանների աղեղնութիւնը, մենդեղնի անբաւարարութիւնը և կենսի ուրիշ զբոսը կանգնեցնում իրանց տխուր և տգեղացուցիչ դրոշմը: զբաւում են շատ դէմքերի վրա: Միւս երկրացիների կամ գաւառացիների վրա չենք խօսում. անշալի աղքատութիւնը, որ արտացոլում է նրանց պատառոտվածներից ու կոտորբերուհիներից:

են ուղղակի հողից և աւելի նման են գաղանների որջերին, քան մարդկային քնակարանի: Նրանք հազիւ բարձրանում են գետնի մակերեսից և աները առաջից մի հատ ծակ ունեն, որով ընտանիքները ներս են սողում և դուրս գալիս: Լուսամուտ աւելին չէ կայ. պարզապէս մի հողակոյտ է, հողի զոյնով, այնպէս որ շատ անգամ անկարելի է լինում նկատել իրճիթը: Այդ հողակոյտի միակ կահ-կարասին մի քանի կփեր են. անկողին, արթն, սեղան—աւելորդ չապլուծիւն է համարվում: Իրանք ֆէլլահները այնքան աղքատ են, որ, ինչպէս պատմեցին մեզ, միւս ուսումնական երկու անգամ, մասնաւորապէս տոններին: Ամբողջ տարին նրանց սովորական կերակուրն է հում սոխ և ցամաք թխած հաց: Ամենահարուստները նրանք են համարվում, որոնք կարողանում են ունենալ կաթ, պանիր, մեղր և արուս, չը նայելով, որ արմատը Եգիպտոսում նոյնքան սովորական պտուղ է, որքան մեղանում խաղողը:

Մի խօսքով՝ մերկութիւնը և տնակութիւնը իսկոյն աչքի են ընկնում. կեղտոտութիւնը անտանելի է և դրա համեմատ, ինչպէս բացատրում էին մեզ մեր ուղեկիցները, մահացութիւնը սարսփելի մեծ է: Այդ տխուր պատկերները աւելի մտալ կերպարանք են ստանում, երբ ճանապարհի երկու կողմերով նկատում էք անընդհատ գերեզմանատներ: Գերեզմաններ և միայն գերեզմաններ, արաբական բնաօրոշ մահաբձաններով: Այնքան գիւղ և բնակարան չը կայ, որքան գերեզմաններ. կատարեւապէս մեռելներ թագաւորութիւնն այն նախկին, համայն տեղերէն մէջ իր փարթաւութեամբ հաշակված,

բից, և մարմնի բոլորովին անխնամը մնալը կորեղն են նրանց դէմքից հաճելի առված պատկերը, բայց և այնպէս այդ աւերակների միջից մի զոյգ աչք, առամների մի սաղաթիւս շարք տեսնում էք պսպղում են այստեղ այնտեղ:

Առաւօտեան ժամերգութիւնից յետ երգում են տուել եպիսկոպոսացու վարդապետները՝ Կիւրեղ, Մակար, Անանիա և կաթողիկոսական դիւանաւարի խորէն ծայրագոյն վարդապետ Ստեփանէ:

Պատարագին եկեղեցի է իջնում վեհապետը, որի անցքի վրա խոնվում է ուխտաւոր ճանապարհը խափանելու չափ: Վերադարձին, որ պատահում է նախ քան պատարագի տալու, և եկեղեցու հիւսիսային դռնով, որովհետև միջի դռնով դուրս գալու համար հարկաւոր կը լինէր խիտ ամբողջ ճեղքել, ժողովուրդը դուրս է խուժում և դարձեալ անցքը խափանում: Նա ուղում է մօտիկից, աչքը աչքի մէջ, տեսնել Կաթողիկոսին: Կէն կանգնելով, ճանապարհ տուր, ուր եւ քաղաքի դէպի առաջ, ասում էր նեղութեամբ եկեղեցականներից մինը մի ուխտաւորի, թեկը քաշելով՝ «է՛, ինչ եւ քաշում. հապա աչքան ճանապարհ ինչի եմ եկել, որ ուղածս չը տեսնեմ», պատասխանում էր զայնովով ուխտաւորը, որ այն օրակին առաջ էր մղվում բեմը մտնելու անցքի վրա և ձգտում էր Կաթողիկոսին աթոռի վրա տեսնել:

Ուխտաւորը տօնախմբութեան օրերին գալիս է Էջմիածին, ոչ միայն սրբութիւնները համբուրելու, այլ և իր համար շատ հետաքրքրելի բաներ տեսնելու հայրապետանիստ տեղում: Բայց տեսնելու և դիտարկելու այդ բաղձանքից օգտվելով ցոյց տալ բոլոր հետաքրքրելիքները, բացատրել, զգալ պատմական յիշատակարանները և զեղեցիկ տպագործութիւններով արձակել նրան մայր Էջմիածնից, այդ այստեղի բարձր ու վարձերից ու սովորութիւններից օտար բան է դեռ երևում: Մի տեսակ ընդունելութիւն կայ, ճշմարիտ է. բայց այն էլ առանձնապէս վերապահված է արտօնաբանների համար, որոնցից շօշափելի շահի ակնկալութիւն կայ: Կարծում եմ, ժողովուրդի ջերմ սիրտը նոյնպէս գնահատելի և առաւել զնահաւորի զանձ պէտք է համարվէր:

Պատարագը աւարտած, միաբանութեան անդամների մի մասը, պատարագի վարդապետը սարկաւազներով և դպիրներով և ձեռնարանի աշակերտները հանգիստով եկեղեցուց դուրս գալով՝ չըջապատում են Գէորգ Դ-ի շիրիմը զանգակատան հիւսիսային կողմում: Շիրիմն այդ օրակին ծածկված է դիւղադի նման մի խաւ կտորով, որի վրա դեռեղված է ծաղիկներից հիւսված մի պսակ՝ շուրջը ծաղիկների ցիւրեցան: Կաթողիկո-

ծաղկած և բարդաւած Եգիպտոսի, կամ փառաւոր Կէմիի և այժմեան թշուառ ֆէլլահների աղքատութեան մէջ, որոնք ապրում են պանծալի անցեալի աւերակների վրա, որոնք խմում են նուիրակին Նորի ջուրը և սակայն ոչ մի հասկացողութիւն չունեն իրանց երկրի փառաւոր անցեալի և այն բարձր քաղաքակրթութեան ու կուլտուրայի մասին, որ թագաւորում էր այդտեղ հազար տարիներ առաջ: Բայց այդ անցեալը մահաւորները գործ էին անում իբրև վառելիք և նրանցով աղքատները իրանց բնակարանները ու կերակուր կնոսում:

Գիշերվայ ժամին չըջապատված արաբներով, մաշալաններով և զբոսայիտներով, աւազոտ անապատի մէջ, այդ բոլորը մի տեսակ երկիւղի և տընդութեան մէջ էր գցել մեզ: Սակայն յանկարծ մեր առաջ բացվեց մի գեղանկար տեսարան,— մի կանաչադարձ վիլլա, մի գեղեցիկ զղեակ, չըջապատված ճիւղ բուսականութիւնով, անուշահոտ ծաղիկներով և արմաւենիներով: Այդ Պօղոս բէյի վիլլան էր, գոյնգոյն լապտերների լոյսի հեղեղի մէջ կորած: Մի կատարեալ օտար աւազոտ անապատի մէջ: Մտնելով այդ հիւրերիկալ տունը, մենք մեզ զգայինք ոչ թէ Աֆրիկայի անապատում, այլ մի եւրոպական կոմֆորտով հիւրանոցում: Ազարակաւորով այդ շքեղ, փարթաւ բնակարանը մի զարհուրելի կոնտրաստ էր ներկայացնում նրանից մի քանի քալ հեռու ֆէլլահների գիւղի մերկութեան, աղքատութեան և խեղճութեան հետ: Ինչպէս մեզ պատմեցին, այդ

սական թաղը կանգուն դրված է զլխակողմում չիրմի վրա կատարվում է հոգեհանգստեան մաղթանքը, ոչ մի ճառ չէ արտասանվում. հանդէսը ցրվում է: Մի կենդանի խօսք, պարզ և անպաճօճ մի խօսք, բացատրելով ուխտաւորին կաթողիկոսական գերեզմանների մէջ միայն այդ մէկ գերեզմանի վրա կատարված արարողութեան նշանակութիւնը, աւելորդ չէր համարվի և սիրով կը լինէր լսված:

Ապա տեղի ունեցաւ մի համեստ հանդէս ձեռնարանում:

Ա. Մ. Եգեկեան

ՆԱՄԱԿ ԵՋՄԻՍՏՆԻՑ

Սեպտեմբերի 26-ին

Նախորդ նամակով հաղորդեցինք, որ հոգաբարձութիւնը վճեց թեմական դպրոցի տեսչութիւնից արձակել Սեդրակ Մանդինեանին: Հոգաբարձութիւնը ստիպված եղաւ իր այդ որոշումը հաղորդել վեհապետին, ինքեղով, որ թոյլ չը տրվի ոչ ոքի հոգաբարձութեան վճելու դէմ գնալ:

Վեհապետը պատասխանել է գրաւոր կերպով, որ Կիւրեղից բացատրութիւն կը պահանջի: Սրանով չը բաւականացած՝ հոգաբարձութիւնը ուղում է նորից բողոքել և Մանդինեանի արձակումը պահանջել, հակառակ դէպքում հոգաբարձութեանը մնում է առանց նախագահի առաջ տանել իր որոշումը:

Գաւառներից նոյնպէս անբաւականութիւններ են լսվում յաջորդների դէմ, որոնք ոտքի տակ են տալիս ամեն մի կանոն և իրանց կամքը առաջ են տանում որպէս օրէնք:

Վերջերս առաջնորդարանի բազմ լցվել է տըգէտ տիրացուներով, որոնք այնքան խրախուսանք են գտել, որ առաջվայ պահանջած թեմի քընուութեան անգամ չեն ենթարկվում: Ով որ եկեղեցում աւետարան կարողացաւ կարդալ, նա տէր էր աղաւթի:—այդպիսով ուրեմն դժբաղտութիւն կուտենանք շուտով ակնատես լինելու 17-ից բաղկացած մի նոր խումբ օղէտների ձեռնադրութեան...

Կայանեան օրիորդաց դպրոցի համար ընտրված հոգաբարձութեան թղթերը, ինչպէս լսում ենք, չեն ուղում շուտով ներկայացնել Կաթողիկոսին և հաստատութիւն, որովհետև ընտրված հոգաբարձուները սրա կամ նրա քմիքի համաձայն չեն:

Ա.—Գ.Յ.

ՆՆՈՒՐԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Հոկտեմբերի 4-ին, երեկոյեան 5 ժամին, անդրկովկասեան երկաթուղու արտակարգ դնացքով

վիճակի մէջ են գտնվում Եգիպտոսում ամեն տեղ հողատէրերը և ֆէլլահները: Անդլիական տիրապետութիւնը և կուլտուրան դեռ անգոր են փոխել երկրի այդ անապարգ վիճակը...

Առաւ Լուսնուսում էլ գիշերեցինք մենք: Անմութիւն է ամառ ժամանակ ճանապարհորդել Եգիպտոսում. կարծես վառարանի մէջ էինք: Այդ բաւական չէ, երկրորդ օրը, երբ վերադառնում էինք Կայիրէ, յանկարծ սկսեց փչել սիրօ կիւայրող քամին. ամբողջ անապատը շարժվեց: Փշուռ ամպեր աւազին սարի պէս կուտակվեցին և աւաղը թափվում էր ամեն կողմից մեր վրա: Փոշու մէջ կորած էինք, իսկ քարերը այդ փոշին ցեխի դարձնելով, մարդու կերպարանքը այնպէս էր կեղտոտում, որ անկարելի էր լինում ճանաչել: Անիծեալ փոշին ամեն տեղ մտնում էր՝ բերանը, քիթը, ակնաջը, հագուստի մէջ, չը նայելով որ վաղօթի դռները պինդ փակված էին:

Եգիպտոսում, ամառ ժամանակ, ցերեկները, առաւօտեան ժամը 9-ից սկսած մինչև երեկոյեան ժամը 6-ը ոչ մի շարժում չէ լինում. ամենքը փակվում են տներում, հագնում են մի երկար սպիտակ շապիկ և դուռ, լուսամուտ պինդ փակելով՝ հանգստանում են. կեսընը, շարժողութիւնը սկսվում է երեկոյեան: Այդ է պատճառը, որ եւրոպացիները ճանապարհորդում են Եգիպտոսում ձմեռը կամ գարնան. ամենալաւ ժամանակը նոյեմբերից—ապրիլ է, երբ Եգիպտոսի օդը վերին աստիճանի առողջաբար և մեղմ է:

(Կը շարունակվի)



